# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
# ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 20 » ապրիլ 2021թ.** **N 48 Ա**

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 12-րդ հոդվածի դրույթներով՝*

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

*1. «10 միլիոն ծառ» նախաձեռնության շրջանակում իրականացվող համապետական ծառատունկին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի, նրա ենթակայությամբ գործող կազմակերպությունների և մարզի համայնքների մասնակցությունը պատշաճ ապահովելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:*

*2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո զբաղվել կազմակերպչական աշխատանքներով, ամփոփել և դրանց արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ Վայոց ձորի մարզպետին, ինչպես նաև ըստ անհրաժեշտության իրականացնել ստուգայցեր:*

4/20/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

*Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*Հավելված ՀՀ Վայոց ձորի մարզպետի*
*2021թ. ապրիլի 20-ի թիվ 48-Ա որոշման*

**«10 միլիոն ծառ» նախաձեռնության շրջանակում իրականացվող համապետական ծառատնկին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի, նրա ենթակայությամբ գործող կազմակերպությունների և մարզի համայնքների մասնակցությունը պատշաճ ապահովելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի անհատական կազմը**

1. **Մարգարյան Գեղամ** - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ (խմբի ղեկավար),
2. **Հովհաննիսյան Վարդան** – մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի տեղակալ,
3. **Ղազարյան Արփիար** – մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,
4. **Ասլանյան Վահե** – մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,
5. **Մաղաքյան Նարինե** – մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ,
6. **Մերոպյան Մերուժ** - մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ,
7. **Մինասյան Ռուբիկ** - մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ: